



**USAID**  
FROM THE AMERICAN PEOPLE



**AFIC**

**COUNTERPART**  
INTERNATIONAL



# ԳՈՐԾԱՐԱՐԻ ՉԱՅՆ

*Սեպտեմբեր-2011*

Իրադարձություններ/Նորություններ/Հայտարարություններ /Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ  
**ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ** **ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



## *Համագործակցության համաժողով Վայոց Ձորում*

Ս.թ. սեպտեմբերի 26-ին, Վայքի Տուրիզմի կենտրոնում տեղի ունեցավ Տեղական ինքնակառավարման և փոքր ու միջին ձեռնարկությունների համագործակցության համաժողով, որը կազմակերպվել էր «Հայկական ՓՄՁ-ների զարգացումը ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական իշխանությունների խթանիչ գործունեության միջոցով» Լեհաստանի հանրապետության արտաքին գործերի նախարարության կողմից մշակված ծրագրի շրջանակներում:

Այս փորձնական ծրագրին մասնակցում են «Բիզնես շահերի պաշտպանության ցանցի» անդամ՝ «Աշխատանք և Հայրենիք» ՀԿ-ն, «Քաղաքացիական հասարակության և տարածաշրջանային առաջընթաց»/ICSRD/ ՀԿ-ն, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն»/CARD/ հիմնադրամը, ինչպես նաև լեհական «Գործընկերներ հանուն տեղական ինքնակառավարման» ՀԿ-ն: Ծրագիրը տեղական ՓՄՁ-երի զարգացման, ինչպես նաև ՓՄՁ-երի և տեղական իշխանությունների միջև փոխհամագործակցության մեծ հնարավորություն է տալիս:

Համագործակցության համաժողովը մեկօրյա միջոցառում էր՝ ուղղված ՓՄՁ-երի զարգացման խնդիրներին: Համաժողովին մասնակցում էին Մարզում գործող ՏԻՄ-երը, ՓՄՁ-երը և ՀԿ-ները, ինչպես նաև Լեհաստանից ժամանած մասնագետներ: Լեհ մասնագետները ներկայացրին իրենց հաջողված փորձն ու լավագույն օրինակներն այս ոլորտում:

## *Համագործակցության համաժողով Վայոց Ձորում*

*Տիգրան Սարգսյան. «Ջրուսաշրջությունը մեր երկրում կարող է և պետք է լինի բազմազան և բազմաբովանդակ»*

*Վարչապետը գործարարներին կոչ է անում հրաժարվել կնիքներից*

*Ստեղծվել է անվճար բիզնես տեղեկատու. այն կաշխատի հիմնականում վիրտուալ միջավայրում*

*Կայացավ ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական տասներկուերորդ նիստը*

*Նոյեմբերի սկզբին Երևանում կկայանա «Բելգիական շաբաթը Հայաստանում» գործարար համաժողովը*

*Ստեղծվել է ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդ*

*Գործարարները գործարար միջավայրի էական բարելավում չեն նկատում*

*Կառավարությունը որոշել է խթանել արտահանումը*

*Սերժ Սարգսյանը ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ հրավիրել է տոնական ընդունելություն*

*Հայ գործարարները դժգոհ են տնտեսական մրցակցության մակարդակից*

*Էկոնոմիկայի նախարարը մեկնում է Լեհաստան՝ մասնակցելու Եվրոպական նախարարական համաժողովին*

*Հայաստանը համաշխարհային մրցունակության գեկույցում առաջընթաց ունի*

*Հայաստանում աճում են ՄՊԸ-ները, բայց պակասում են արտադրական կոռպորատիվները*



Վարչապետ Տիգրան Սարգսյանն այսօր մասնակցել է զբոսաշրջության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը, որին ներկա են եղել նաև զբոսաշրջության արդյունաբերության ներկայացուցիչներ: Ծնորհավորելով ներկաներին զբոսաշրջության միջազգային օրվա կապակցությամբ՝ Տիգրան Սարգսյանը նշել է, որ այս օրն առիթ է՝ իմաստավորելու և քննարկելու տուրիզմի բնագավառում մեր երկրի անցած 20 տարիներն ու հետագա ծրագրերը: **«Իմ կարծիքով՝ այստեղ հավաքվածները մի բանում վստահ են. Հայաստանն ունի զբոսաշրջության զարգացման մեր ներուժ և այն մենք դեռևս լիովին չենք օգտագործում: Զբոսաշրջությունը մեր երկրում կարող է և պետք է լինի բազմազան և բազմաբովանդակ: Զբոսաշրջության բնագավառում պետք է ընդգրկվեն նոր ուղղություններ և այս առումով Հայաստանի կառավարությունը դեռևս ունի մեծ անելիքներ: Անհրաժեշտ է, որպեսզի զբոսաշրջության ոլորտում մասնագիտացված բոլոր կառույցները կառավարության հետ միասին լինեն մասնակիցը՝ տուրիզմի զարգացման ծրագրերի իրականացման գործում»:** Տիգրան Սարգսյանն ուրախությամբ նշել է, որ պետություն-մասնավոր հատված համագործակցության շնորհիվ վերջին շրջանում արձանագրվել են հաջողություններ: Այս տեսակետից կառավարությանը ղեկավարը հիշեցրել է Ազգային մրցունակության հիմնադրամի կողմից Տաթևի վանական համալիրում իրականացված ներդրումային ծրագրերը: **«Այն իրենում ներառում էր տասնյակ միլիոնավոր դուրարների ներդրումներ՝ մասնավոր հատվածի, և համաֆինանսավորում՝ պետության կողմից: Եթե կառավարությունը տեսնում է զբոսաշրջության ներուժի բացահայտման և իրացման գործում նախաձեռնություններ մասնավորների կողմից, ապա իր վրա է վերցնում ենթակառուցվածքների կառուցման պատասխանատվությունը»:**

Վարչապետի խոսքով՝ համաշխարհային զբոսաշրջության քարտեզում հայտնվելու համար պետք է կիրառել էլեկտրոնային միջոցների հնարավորությունները: Այս տեսակետից, գործադիրի ղեկավարը հիշեցրել է, որ Հայաստանում էլեկտրոնային եղանակով հնարավոր է ամրագրել հյուրանոցային համարներ, ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների և ծառայությունների վերաբերյալ:

30.09.2011  
gov.am

**Վարչապետը գործարարներին կոչ է անում հրաժարվել կնիքներից**

Հայաստանի տնտեսվարող սուբյեկտները շարունակում են կնիքներ օգտագործել, չնայած բոլոր օրենքներից ու նորմատիվային ակտերից այդ պահանջը հանված է: Նման հայտարարությամբ այսօր՝ սեպտեմբերի 22-ին կառավարության նիստում հանդես եկավ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը: «Այստեղ անհրաժեշտ է նաև Կենտրոնական բանկի օժանդակությունը, որովհետև առևտրային բանկերը նույնպես այդ պրակտիկան շարունակում են», - հայտարարեց վարչապետը:

Նշենք, որ կառավարությունն այսօր վիճակախաղերի կազմակերպիչներին ազատեց հաշվետվություններն ու լիազոր մարմինի տրամադրվող այլ տեղեկությունները կնքելու անհրաժեշտությունից: Ըստ վարչապետի՝ նմանատիպ որոշումները բարելավում են գործարար միջավայրը:

22.09.2011  
news.am

**Ստեղծվել է անվճար բիզնես տեղեկատու. այն կաշխատի հիմնականում վիրտուալ միջավայրում**

Երեւանում այսօր՝ սեպտեմբերի 21-ին, հանրությանը ներկայացվեց անվճար բիզնես տեղեկատու՝ 374.am-ը, տեղեկատվի անվանումը ընտրվել է Հայաստանի հեռախոսային կոդին համահունչ:

Տեղեկատուն կաշխատի հիմնականում վիրտուալ միջավայրում: Նախագծի հեղինակ Սուրեն Սարգսյանը NEWS.am-Ինովացիայի թղթակցի հետ գրույցում ասաց, որ տեղեկատուն անվճար է լինելու թե՛ օգտվողի եւ թե՛ գրանցվող ընկերությունների համար: Նա տեղեկատուն չի դիտարկում որպես մրցակից արդեն իսկ գործող տեղեկատուների հետ, քանի որ իրենք դեռևս փոքր են եւ աշխատելու են հիմնականում վիրտուալ միջավայրում: Նոր տեղեկատուն կտարբերվի արդեն գործող տեղեկատուներից իր փնտրման համակարգով:

«Մենք շեշտը դրել ենք ինտերնետային կայքով փնտրման վրա: Այստեղ գործում է արագագործ փնտրման համակարգ: Փնտրումը կտեսի ավելի պակաս քան մեկ վայրկյան, եւ կսկսվի արդեն բառի երկրորդ տառից՝ բերելով հնարավոր տարբերակները»,-ասաց Ս. Սարգսյանը: Նա նշեց նաև, որ հնարավոր է հետագայում տեղեկատուն ունենա նաև հեռախոսային ծառայություն, սակայն, եթե ընկերությունները ցանկանան օգտվել նաև այդ ծառայությունից, ապա պետք է որոշակի գումար կվճարեն:

Ս. Սարգսյանի տեղեկացմամբ, նոր տեղեկատուում արդեն գրանցված է ավելի քան 15 հազ. ընկերություն, որոնց թիվը առաջիկա մեկ ամսվա ընթացքում կավելանա 700-ով:

Ս. Սարգսյանի տեղեկացմամբ, նոր տեղեկատուում արդեն գրանցված է ավելի քան 15 հազ. ընկերություն, այդ թվում 300-400 կազմակերպություն նաև Լեռնային Ղարաբաղի հանրապետությունից:

21.09.2011  
news.am

Մեկտեմբերի 20-ին Երևանում կայացավ ՀՀ-ԵՄ համագործակցության կոմիտեի հերթական տասներկուերորդ նիստը: Նիստի համանախագահներն էին հայկական կողմից՝ ՀՀ Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը, Եվրոպական կողմից՝ Եվրոպական արտաքին հարաբերությունների ծառայության Ռուսաստանի, Արևելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համագործակցության և ԵԱՀԿ հարցերով տնօրեն Գունար Վիգանդը: Նիստի ժամանակ կողմերն ընդգծեցին, որ Էական առաջընթաց է գրանցվել ԵՄ- Հայաստան Ասոցացման համաձայնագրի շուրջ բանակցությունների շրջանակներում, ինչպես նաև ՀՀ-ԵՄ Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԽՀԱԱԳ) բանակցությունների մեկնարկի համար նախանշված առաջնահերթությունների իրականացման ուղղությամբ՝ հույս հայտնելով, որ մոտ ապագայում հնարավոր կլինի ապահովել դրանց ամբողջական իրականացումը և ԽՀԱԱԳ բանակցությունների մեկնարկը: Կողմերն անդրադարձան նաև սեպտեմբերի վերջին Վարշավայում կայանալիք Արևելյան գործընկերության գագաթաժողովի օրակարգին: Նիստի օրակարգում ներառված էին նաև մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին, տրանսպորտի և էներգետիկայի ոլորտում համագործակցությանը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորմանը, Հայաստան-Թուրքիա հարաբերություններին և ԵՄ աջակցության ծրագրերին վերաբերող հարցեր:

*Լրացուցիչ տեղեկատվություն.*

*1996թ. ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետության ու Եվրոպական Համայնքների և նրա անդամ պետությունների միջև կնքվել է Գործընկերության և համագործակցության մասին համաձայնագիրը /ԳՀՀ/, որն ուժի մեջ է մտել 1999թ. հուլիսի 1-ից: Համաձայնագրի 83-րդ հոդվածի համաձայն տեղեկվել է Համագործակցության կոմիտե, որի նիստերը գումարվում են տարին մեկ անգամ, ռոտացիոն կարգով՝ Երևանում և Բրյուսելում:*

20.09.2011  
mineconomy.am

**Նոյեմբերի սկզբին Երևանում կկայանա «Բելգիական շաբաթը Հայաստանում» գործարար համաժողովը**

Բրյուսելում, բելգիական Լիեժի քաղաքապետ Վիլի Դրմեյերը խնդրել է Հայաստանի աջակցությունը՝ «Միջազգային Էքսպո-2017»-ը Լիեժում անցկացնելու հարցում: Նա այդ մասին, այսօր՝ սեպտեմբերի 19-ին, նշել է, Բրյուսելում, Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ:

Կառավարության մամուլի ծառայությունից հայտնում են, որ ըստ Վ. Դրմեյերի՝ վերջին տարիներին Լիեժի զարգացման տեմպերը, տնտեսական աճը, Եվրոպական նշանակություն ունեցող աշխարհագրական դիրքը, ինչպես նաև Բելգիայում մեծաթիվ դիվանագիտական առաքելությունների առկայությունը դարձել են այն հիմնական խթանիչ գործոնները, որ թույլ են տվել քաղաքային իշխանություններին հայտ ներկայացնել «Էքսպոն» Լիեժում անցկացնելու համար: Հերթական էքսպոյի անցկացման վայրը որոշվելու է «Bureau International des expositions» կազմակերպության 157 անդամ երկրների, այդ թվում նաև Հայաստանի քվեարկությամբ:

Ըստ Լիեժի քաղաքապետի՝ իրենք սկսել են էքսպոյի անցկացման շուրջ իրականացնել քարոզարշավ եւ ուրախ են, որ առաջին իրենց ծրագրերին ծանոթացնելու հնարավորություն են ստացել Հայաստանի վարչապետին: Լիեժում 2017թ. էքսպոն անցկացնելու գաղափարն առավել հանգամանալից ներկայացնելու նպատակով վարչապետը Վ. Դրմեյերին հրավիրել է Հայաստան:

Այնուհետև Տիգրան Սարգսյանը հանդիպել է հայ-բելգիական առևտրային պալատի նախագահ Վալերի Սաֆարյանին: Հանդիպման ընթացքում քննարկվել են նոյեմբերի 7-9-ը Երևանում կայանալիք «Բելգիական շաբաթը Հայաստանում» խորագրով հայ-բելգիական գործարար համաժողովին վերաբերող հարցեր: Համաժողովի շրջանակում Երևան կժամանեն բելգիական գործարար հատվածի մոտ 50 ներկայացուցիչներ, ովքեր բացի համաժողովին մասնակցելուց՝ հանդիպումներ կունենան նաև հայաստանյան իրենց գործընկերների հետ՝ կքննարկեն երկկողմ համագործակցությանը վերաբերող հարցեր: Գործարար համաժողովին կմասնակցեն երեք տարբեր պատվիրակություններ՝ Բելգիայի ֆլամանական եւ վալոնական մասի գործարարներ, ինչպես նաև «Agoria business club»-ի ներկայացուցիչներ: Վալերի Սաֆարյանը վարչապետին տեղեկացրել է, որ Բելգիայի ֆլամանական մասը հիմնականում մասնագիտացած է շինարարության, ճանապարհաշինության, ադամանդագործության եւ աղբահանության ոլորտներում, իսկ վալոնական մասը՝ սննդի արդյունաբերության, էներգետիկայի, քիմիական եւ դեղագործական արդյունաբերության, ինչպես նաև կաշվի վերամշակման ու արտադրության ոլորտներում:

Ըստ հայ-բելգիական առևտրային պալատի նախագահի՝ բելգիացի գործարարների մոտ առկա է մեծ հետաքրքրություն հայկական շուկայի նկատմամբ: Հայաստանը վերջիններիս համար բիզնես ոլորտում դիտարկվում է որպես տարածաշրջանային կենտրոն: Ի տարբերություն Բելգիայի ֆլամանական մասի, վալոնական մասի գործարար համայնքի ներկայացուցիչները ծանոթ են Հայաստանին՝ Վալոնիայի արտաքին առևտրի եւ ներդրումների գործակալության՝ Հայկական զարգացման գործակալության հետ համատեղ իրականացված «ARMENWAL» ծրագրից: Օրվա երկրորդ կեսին նախատեսվում է Տիգրան Սարգսյանի հանդիպումը ԵՄ ընդլայնման եւ Եվրոպական հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի հետ: Բրյուսել կատարած աշխատանքային այցը վարչապետը կեզրափակի «European press club»-ում հայկական եւ Եվրոպական լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հանդիպմամբ:

20.09.2011  
news.am

Նախագահ Սերժ Սարգսյանը հրամանագիր է ստորագրել տնտեսական գործունեության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման միջոցառումների համակարգման և ՀՀ տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի բարեփոխումների խորհուրդ ստեղծելու մասին:

Խորհուրդն ստեղծվել է գործարար միջավայրի և շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող դրույթների վերացման, պետության կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների բարելավման և պարզեցման, այս ոլորտներում գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործման, ինչպես նաև դրանցով սահմանված տնտեսապես ոչ արդյունավետ, ծախսատար և աննպատակահարմար մեխանիզմների կրճատման վերաբերյալ առաջարկություններ մշակելու նպատակով:

Նախագահի հրամանագրով հաստատվել է նաև խորհրդի կազմը, որի նախագահն է ՀՀ վարչապետը, և նախատեսված բարեփոխումների գործընթացում ընդգրկվող ոլորտների ցանկը:

ՀՀ կառավարությանը հանձնարարվել է մեկամսյա ժամկետում հաստատել բարեփոխումների խորհրդի կանոնադրությունը, մինչև 2012 թվականի հունվարի 1-ը՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական ոլորտը կարգավորող իրավական ակտերի կարգավորման ազդեցության գնահատման համակարգի կատարելագործման հայեցակարգը:

Առաջարկվել է Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահին և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահին համագործակցել բարեփոխումների խորհրդի և նրա գործունեությունն ապահովող պետական կազմակերպության հետ՝ Նախագահի վերոնշյալ հրամանագրով նախատեսված գործընթացի շրջանակներում:

19.09.2011  
news.am

**Գործարարները գործարար միջավայրի էական բարելավում չեն նկատում**

Տնտեսվարող սուբյեկտների մոտ իրականացված հարցումների արդյունքներով Հայաստանում տնտեսական ակտիվության եւ գործարար միջավայրի ինդեքսները նախորդ տարվա համեմատ էական փոփոխություններ չեն կրել: Այդ մասին տեղեկացնում է ՀՀ կենտրոնական բանկը:

Նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ գործարար միջավայրի ինդեքսը կազմել է 101 տոկոս, իսկ նախորդ եռամսյակի նկատմամբ՝ 104.7 տոկոս: Նշենք, որ գործարար միջավայրի ինդեքսը արտահայտում է ռիսկերն ու ընդհանուր տնտեսական իրավիճակի վերաբերյալ գնահատականները: Այսպիսով՝ հայ գործարարները գտնում են, որ 2011 թ. երրորդ եռամսյակում գործարար միջավայրը որոշ չափով բարելավվել է, սակայն էապես չի տարբերվում նախորդ տարվա իրավիճակից: Հատկանշական է. որ եթե բացառենք ծառայությունների ոլորտը, ապա տնտեսությունում ընդհանուր առմամբ կգրանցվի գործարար միջավայրի ինդեքսի նվազում:

Տնտեսական ակտիվության ինդեքսը, որն արտահայտում է կազմակերպությունների սպասումները արտադրանքի թողարկման, պահանջարկի կամ պաշարների վերաբերյալ, գրեթե փոփոխություն չի կրել: Տնտեսական ակտիվության ինդեքսը եւ նախորդ եռամսյակի, եւ նախորդ տարվա նկատմամբ կազմել է 99.9 տոկոս:

18.09.2011  
gov.am

**Կառավարությունը որոշել է խթանել արտահանումը**

Տեաակետ

Եվ այսպես, դատելով որոշ լրատվամիջոցների հաղորդումներից, կառավարությունը պատրաստել է Հայաստանի արդյունաբերությունը, մասնավորապես արտահանումը խթանելու մի ծրագիր: Համենայն դեպս, այդ մասին հայտնեց ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը սեպտեմբերի սկզբում մի գործարան այցելելիս: Եվ նույնիսկ, համաձայն հաղորդագրությունների, գործարանների հետ քննարկել է իր նախագիծը:

Այդ նախագիծը, որը հայտարարված է որպես «քննարկվող», մատչելի չէ հասարակությանը: Ոչ էկոնոմիկայի նախարարության, ոչ էլ կառավարության կայքերում նրա մասին հետք չկա: Այդ պատճառով ես հարկ եմ համարում նրա հեղինակներին որոշ խորհուրդներ տալ առանց այդ նախագիծը տեսնելու:

Առաջին՝ նոր նախագծում արտահայտված տնտեսության ոլորտները պարտադիր չէ, որ կապ ունենան Խորհրդային Հայաստանում եղած արդյունաբերության ճյուղերի հետ, քանի որ դրանցից շատերը (եթե ոչ՝ մեծ մասը) հնացել են եւ անմրցունակ են: Օրինակ՝ շատ էլ թե ունեցել ենք լամպերի ու լուսատուների խոշոր արտադրություն: Իսկ ամենավատն այն է, որ այդ ոլորտներում աշխատած մարդիկ արդեն տարիքով են, իսկ նրանց հերթափոխ չկա: Այնպես որ այս քսան տարում մենք կորցրել ենք Խորհրդային Հայաստանից ժառանգած մի շարք առավելություններ, եւ դա պետք է հաշվի առնվի: Կառավարությունն արդեն ցույց է տվել նման վարվելակերպի առնվազն մեկ օրինակ: Նա իր ջանքերը ուղղել է ոչ թե նախկինում Հայաստանում եղած պարարտանյութերի արտադրության վերականգնմանը, այլ փորձում է օժանդակել (որքանով հաջող՝ այլ հարց է) ավելի հեռանկարային պարարտանյութի՝ «Ազոցեոլիտ» կոչվածի, տարածմանը:

Երկրորդ՝ էթե կառավարությունը մինչ այժմ չի միջամտել բիզնեսի անցուղարձին, հայտարարելով որ շուկան ինքը կկարգավորի տնտեսությունը, ապա այսուհետեւ հարկադրված է այդ անել մշտապես: Այլապես Հայաստանը տնտեսություն չի ունենա ընդհանրապես (չեմ տեսել, որ մի մասնագետ վիճարկեր տողերիս հեղինակի՝ «Հայաստանի տնտեսության հնարավոր ապագայի մասին» է <http://analyticon.org/2010/N4/3--archive.pdf> Ստեփանակերտում հրապարակված հոդվածի դրույթները: Դրանց մեկ այլ տարբերակը հրատարակվել է «Նոր Խոսք» առցանց հանդեսում «Կամ ոսկե միլիարդ, կամ Բանգլադեշ» անունով <http://norkhosq.net/?p=5833> ): Կառավարությունն արդեն արել է ոչ թե մեկ, այլ երեք քայլ այս ուղղությամբ: Առաջինը՝ նա արդեն իսկ որոշ ձեռնարկությունների միջոցներ տրամադրեց 2009 թվականին, ճգնաժամի ժամանակ: Երկրորդ՝ նա այս տարի արտոնյալ վարկեր է տրամադրել բազմաթիվ գյուղացիական տնտեսությունների: Երրորդ քայլը՝ ինչպես հայտարարեց նույն Տիգրան Դավթյանը, իր գլխավորած նախարարությունում (նախարարությունում) արդեն ստեղծվել է մի վարկային կազմակերպություն՝ արտահանումը խրախուսելու համար: Պետք է շարունակել այդ քայլերը:

Երրորդ՝ շարունակելով խթանել այսօր հեռանկարային թվացող ճյուղերը, կառավարությունը պետք է կարողանա մտածել նաեւ վաղվա մասին: Այստեղ կառավարությունը չի կարող անել այլ բան, քան կադրերի պատրաստումը: Ասել եմ ու էլի կասեմ, մենք պետք է ունենանք մասնագետներ, որ կարողանանք վաղն էլ գոյատևել: Եվ կա մի ոլորտ, որի մասին կարելի է ասել, որ միշտ պետքական կլինի: Դա թափոնների վերամշակումն է (Համենայն դեպս, ոչ ոք չառարկեց իմ՝ «Հայության ապագան թափոններն են» հոդվածին, «Կապիտալ», 2010թ., դեկտեմբերի 1): Այս ուղղությամբ անհրաժեշտ են մշտական ջանքեր, թե՛ այս եւ թե՛ հաջորդ կառավարությունների կողմից: Որպես առաջին քայլերից մեկը անհրաժեշտ է համապատասխան ստորաբաժանում ստեղծել ճարտարագիտական համալսարանում: Ու փող չինայել այն սարքավորելու համար:

Ես կավելացնեի նաեւ չորրորդ դրույթը: Եթե դիտենք Հայաստանում այսօր առկա գովազդները, կստացվի տպավորություն, որ մեր երկրում կա երեք բիզնես՝ ռեստորաններ, հեռախոսի պրովայդերներ ու առողջապահական հիմնարկներ: Մեկ էլ՝ ջուր արտադրողներ: Ո՛չ բանկերը, ո՛չ մանկապարտեզները, ո՛չ գյուղմթերք արտադրողները, ո՛չ ընտանեկան պանսիոնատները, ո՛չ առողջարանները, ո՛չ հագուստ կամ կոշիկ արտադրողները (այո, այո, կան եւ դրանք) գովազդ չունեն: Ինչ է, մեր ներքին շուկան դրա կարիքը չունի՞: Ճիշտ է, դա որոշում են դրանով զբաղվող գործարարները: Բայց դա նաեւ կառավարության հոգսն է: Դա կոչվում է ներքին շուկայի պաշտպանություն: Եվ հայ գործարարի դաստիարակություն, առանց որոնց վաղը Հայաստան չի լինի: Դրսի «ուսուցիչները» մեզ սովորեցնում են, որ ամենակարեւորը շատ շահույթ ստանալն է, քանի որ այդպես է զարգացել մարդկությունը: Այդպես է, բայց կարո՞ղ է հայ գործարարը դրանով սահմանափակվել:

Տեսակետ  
Հարություն Խաչատրյան

17.09.2011  
azg.am

**Մերժ Սարգսյանը ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ հրավիրել է տոնական ընդունելություն**

Նախագահ Մերժ Սարգսյանը ՀՀ անկախության 20-րդ տարեդարձի առթիվ այսօր Հայաստանի ազգային պատկերասրահում հրավիրել է տոնական ընդունելություն, որին մասնակցել են Հայաստանի քաղաքացիական հասարակության՝ քաղաքական կուսակցությունների, գանգվածային լրատվության միջոցների, Հանրային խորհրդի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:

Հանրապետության դեկավարն ընդունելության մասնակիցներին շնորհավորել է տոնի կապակցությամբ, մաղթել հաջողություններ:  
Հայաստանի պատմության թանգարանում Նախագահ Մերժ Սարգսյանը դիտել է Հայաստանի Հանրապետության անկախության 20-րդ տարեդարձի առթիվ ներկայացված «Խորհրդային Հայաստան» և «Անկախ Հայաստանի Հանրապետությունը» խորագրով մշտական ցուցադրությունները:

Հանրապետության ղեկավարն այցելել է նաև տոնի առթիվ թանգարանում բացված «Հայաստանի Հանրապետության նամականիշները» ժամանակավոր ցուցահանդես, մասնակցել ՀՀ անկախության 20-րդ տարեդարձին նվիրված նամականիշների մարման արարողությանը:

Թանգարանում բացվել է նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հուշադրամները» ժամանակավոր ցուցահանդեսը:

Հայաստանի կենտրոնական բանկի և «Հայփոստի» վերոնշյալ ցուցադրություններում ներկայացված են 1991-2011թթ. հուշադրամների և նամականիշների բոլոր թողարկումների նմուշները:

13.09.2011  
president.am

### **Հայ գործարարները դժգոհ են տնտեսական մրցակցության մակարդակից**

Հայաստանում հարցման ենթարկված գործարարները հիմնականում բացասաբար են գնահատել Հայաստանի մրցակցության ոլորտը, եւ որեւէ դրական փոփոխություն չեն նկատում: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 7-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց «Տնտեսություն և արժեքներ» վերլուծական կենտրոնի նախագահ Մանուկ Հերզնյանը: Արդյունքում՝ Հայաստանը շարունակում է Համաշխարհային մրցունակության զեկույցում գտնվել ստորին հորիզոնականներում: Այսպես՝ 142 երկրների շարքում «տեղական մրցակցության ուժգնություն» հայտանիշով Հայաստանը զբաղեցնում է 139-րդ տեղը, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությամբ՝ 138-րդն ենք, շուկայում գերիշխող խմբերի առկայությամբ՝ 133-րդը:

Հատկանշական է, որ Հայաստանը 2011 թ. ապրիլից էական փոփոխությունների է ենթարկել տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենքը: Ընդլայնվել են հակամենաշնորհային մարմնի լիազորությունները, խստացվել են գերիշխող դիրքի չարաշահման մասով պատիժները: Սակայն հարցման ենթարկված գործարարները (հարցումն իրականացվել է ապրիլ-մայիսին) որեւէ դրական փոփոխություն չեն նշել: Հնարավոր է՝ դա պայմանավորված է նաև նրանով, որ օրենքը նոր է ուժի մեջ մտել:

07.09.2011  
news.am

### **Էկոնոմիկայի նախարարը մեկնում է Լեհաստան՝ մասնակցելու Եվրոպական նախարարական համաժողովին**

Հայաստանի էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանն այսօր՝ սեպտեմբերի 7-ին, եռօրյա աշխատանքային այցով կմեկնի Լեհաստան՝ մասնակցելու Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբի բյուրոյի հանդիպմանը եւ Արեւելյան գործընկերության էկոնոմիկայի նախարարների նախարարական համաժողովին:

Էկոնոմիկայի նախարարության մամուլի ծառայությունից հայտնում են, որ սեպտեմբերի 8-ին Տիգրան Դավթյանը կմասնակցի Լեհաստանի Կրոցլավ քաղաքում կայանալիք Եվրոպական ժողովրդական կուսակցության խմբի բյուրոյի հանդիպմանը, որի ընթացքում նախատեսվում է «Եվրոպական հարեւանության քաղաքականության մարտահրավերները եւ հնարավորությունները թեմայով քննարկում:

Իսկ սեպտեմբերի 9-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարը կմասնակցի ԼՀ Կրինիցա քաղաքում կայանալիք Արեւելյան գործընկերության էկոնոմիկայի նախարարների նախարարական համաժողովին, որին ներկա են լինելու Արեւելյան գործընկերության եւ ԵՄ անդամ երկրների նախարարները:

07.09.2011  
news.am

### **Հայաստանը համաշխարհային մրցունակության զեկույցում առաջինթաց ունի**

Համաշխարհային տնտեսական ֆորումը հրապարակել է Համաշխարհային մրցունակության 2011-12 թ.թ. զեկույցը, որում Հայաստանը 142 երկրների մեջ զբաղեցնում է 92-րդ տեղը: Այդ մասին այսօր՝ սեպտեմբերի 7-ին լրագրողներին տեղեկացրեց «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի նախագահ Մանուկ Հերզնյանը: Նշենք, որ նախորդ տարվա զեկույցում Հայաստանը զբաղեցնում էր 98-րդ տեղը:

Զեկույցում Հայաստանի վերաբերյալ ցուցանիշները հաշվարկվել են հիմնականում 2010 թ. վիճակագրական տվյալների ու 2011 թ. ապրիլ-մայիս ամիսների գործարարների շրջանում կատարված հարցումների հիման վրա: Հայաստանում հարցման են ենթարկվել 80-100 գործարարներ:

Համաշխարհային մրցունակության ցուցիչը, ինչպես նախորդ տարիներին, գլխավորում է Եվեյցարիան: Առաջին հնգյակում են նաև Սինգապուրը, Եվեդիան, Ֆինլանդիան ու ԱՄՆ-ը: Ադրբեջանը 55-րդ տեղում է, Ռուսաստանը՝ 66-րդ, Կրաստանը՝ 88-րդ:

Զեկույցում Հայաստանի հիմնական առավելություններն են մալարիայի բացակայությունը եւ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ցածր տարածվածությունը, աշխատանքի ընդունելու եւ աշխատանքից ազատելու ընթացակարգը, բջջային կապի զարգացվածությունը, մաքսադրույքների չափը եւ այլն:

Հիմնական թերություններն են մրցակցային թույլ դաշտը, մաքսային գործընթացների բեռը, բուհ-արդյունաբերություն համագործակցությունը, դպրոցների որակը, փոքր բաժնետերերի շահերի պաշտպանությունը եւ այլն:

07.09.2011  
news.am

### Հայաստանում աճում են ՄՊԸ-ները, բայց պակասում են արտադրական կոպերատիվները

Հայաստանում 2011թ. ընթացքում ստեղծվել են սահմանափակ պատասխանատվությամբ 1404 ընկերություններ: Արդյունքում՝ ՄՊԸ-ների քանակը հասել է 45 հազարի: Սա առելուրային գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց 70 տոկոսն է:

Ի տարբերություն ՄՊԸ-երի՝ արտադրական կոպերատիվների, ընտանեկան ու անհատական ձեռնարկությունների, դուստր ու պետական ձեռնարկությունների թիվը նվազել է:

Ամենամեծ նվազում առկա է պետական ձեռնարկությունների մասով՝ մոտ 40 տոկոսի չափով վերջին մեկ տարում: Ներկայում ընդամենը առկա են 127 պետական ձեռնարկություններ: Արտադրական կոպերատիվները, որոնց թիվը զիջում է միայն ՄՊԸ-երին, նվազել են 20-ով եւ կազմում են 4981:

07.09.2011  
news.am

### ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ

*Սույն տեղեկագրի թողարկումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ Բնթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման աջակցության ծրագրի , և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ: Տեղեկագրի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են Օտարերկրյա Ներդրումների և Համագործակցության Առցիացիային, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ Բնթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:*